# ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ Է «ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏՎԵԼԸ ԳՈՐԾՈՒՆ ԶՂՋԱԼՈՒ, ՏՈՒԺՈՂԻ ՀԵՏ ՀԱՆՑԱՆՔ ԿԱՏԱՐԱԾ ԱՆՁԻ ՀԵՏ ՀԱՇՏՎԵԼՈՒ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ» ԹԵՄԱՅՈՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

**18.05.2016 12:48**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում կազմակերպվել էր վերապատրաստման դասընթաց «Քրեական պատասխանատվությունից ազատվելը գործուն զղջալու, տուժողի հետ հանցանք կատարած անձի հետ հաշտվելու և իրադրության փոփոխության հիմքով» թեմայով:
Դասընթացը վարել է փաստաբան Մարտին Մանուկյանը:
Փաստաբաններն անդրադարձել են ապացույցների ինստիտուտի առանձին հիմնախնդիրների վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքին: Քննարկել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի կիրառմամբ անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը լուծելիս հնարավոր պրակտիկ իրավիճակներ:
Վերապատրաստման մասնակիցները մտքեր են փոխանակել հիմնականում պրակտիկայում հանդիպող` հայեցողական քրեական հետապնդմանը վերաբերող որոշ հիմնահարցերի շուրջ:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })